ՀՀ ԿԳՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

«16» 02 2024 թ.

(ստորագրություն)

ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Դասավանդման որակի և մասնագիտական կարողությունների բարձր մակարդակը նաև կախված է դասավանդողների խրախուսման և աջակցման քաղաքականությունից:

Յուրաքանչյուր դասախոսին ուսումնական տարվա սկզբին տրվում է 100 միավոր.

1. անհարգելի բացակայության համար հանվելու է 10-ը միավոր,
2. ուշանալու համար հանվելու է 10-ը միավոր,
3. դասին պատրաստված չներկայանալու համար հանվելու է 10-ը միավոր,
4. սովորողների դասից փախչելու համար դասախոսից և կուրսղեկից հանվելու է 10-ը միավոր,
5. յուրաքանչյուր ուսանողի անհարգելի բացակայության համար դասախոսից և կուրսղեկից հանվելու է 10-ը միավոր,
6. մատենավարության մեջ դիտողությունից հետո կրկին վրիպելու համար հանվելու է 10-ը միավոր,
7. դասապրոցեսի ոչ ճիշտ կազմակերպման և ուսանողների վարքի չվերահսկման համար հանվում է 10-ը միավոր,
8. պահանջվող փաստաթղթերում թերությունների առկայության դեպքում հանվում է 20 միավոր:

Լավագույն մեթոդական զեկուցման համար

1. եթե վերաբերվում է միայն իր առարկային կամ մոդուլին, գումարվում է 10-ը միավոր,
2. համագործակցային՝ այլ առարկաներ և մոդուլներ դասավանդողներ, գումարվում է 20 միավոր,
3. լավագույն ուսանողակենտրոն դաս անցկացնելու համար գումարվում է 10-միավոր,
4. ստեղծագործական ակտիվ մեթոդներով, հնարներով և դիդակտիկ նյութերով, տեխնիկական միջոցներով դաս անցկացնելու համար գումարում է 20 միավոր,
5. կուրսղեկի լավագույն պլան կազմելու համար գումարվում է 10-ը միավոր: